

Կ Ա Ն Տ Ի Ի Մ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

- Աղբիւրներ. 1. Կանտ: Критика чистаго разума. Пер. Н. Лос-
скаго, նոյնը՝ Соколовъ-ի թարգմանութեամբ
2. Կանտ. Пролегомены ко всякой будущей мета-
физикѣ пер. Соловьева.

Կանտի մասին մեծապէս օգտուել եմ, մանաւանդ «Տրանս-
ցենդենտալ անալիտիկայում», Կունս-Ֆիշերի կլասիկ շարա-
դրութիւնից. քիչ չափով նաև Վինդեյլրանդի, Ֆալկենբերգի և
Ռիլի և այլոց մանր գրուածքներից:

Ինչ վերաբերում է տերմիններին, աշխատել եմ այն տեր-
մինները, որոնք միջազգային ընդունելութիւն ունին, թողնել
մեծ մասամբ նոյնը, մի քանիսը թարգմանել. այսպէս՝

Anschauung (ռուս. созерцание, наглядное представление,
ամանք՝ воззрѣніе) բառը թարգմանել եմ «նայեցողութիւն» բա-
ռով և ոչ թէ՛ «պատկերացում» կամ «պատկերացողութիւն»,
որոնք մեզանում գործ են ածւում սովորաբար «մտապաակեր»,
ռուս. представление, բառի իմաստով ևս:

Verstand (ռուս. рассудокъ) բառը թարգմանել եմ «միտք»
բառով: «Դատողութիւն» բառով անյարմար էր թարգմանել,
որովհետև «դատողութիւն» ենք անուանում սովորաբար և՛
մտածութեան օրգանը, և մտածութեան ակտը, և՛ մտածու-
թեան պրոդուկտը: «Դատողութիւն» բառը պահել եմ суждение
բառի համար: Ըստ Կանտի «դատողութիւնն» ու «մտածողու-
թիւնը» նոյնանում են. ուստի մտածութեան օրգանը «միտք»
անուանել խիստ յարմար է այստեղ:

Vernunft բառը թարգմանել եմ «բանականութիւն» բա-
ռով, որ ըստ Կանտի երեք իմաստ ունի.—ա. ամենալայն
իմաստով՝ իբրև իմացական և, միևնոյն ժամանակ, բարոյական
կարողութիւն (տեսական և գործնական բանականութիւն). բ.
իբրև իմացական ամենաընդհանուր կարողութիւն և դ. ամե-
նանեղ իմաստով՝ իբրև գաղափարներ արտադրող կարողութիւն
(իդէաների օրգան):

Յարութիւնեան Յակովբ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ներածութիւն.

I Պատմական ներածութիւն.

Իւրաքանչիւր մտածող, երբ նա խորհրդածում է աշխարհի մասին, անպայման ունի իւր կարծիքը այն խնդրի վերաբերմամբ, թէ ինչ է ներկայացնում իր այդ խորհրդածութեան առարկան և թէ ինչ յարաբերութեան մէջ է նա իմացութեան հետ և ինչ է նոյն ինքն իմացութիւնը. և այդ կարծիքով ապորուած է նրա ամբողջ աշխարհայեացքը իր վերջին մանրամասնութեամբ, անկախ այն հանդամանքից, թէ փիլիսոփան ինքը գիտակցում է այդ, թէ ոչ: Այս իմաստով իմացաբանութիւնը նոյնքան հին է, որքան և փիլիսոփայութիւնը՝ ուրեմն և մտածողութիւնն ընդհանրապէս, քանի որ նա արամաբանօրէն կանխում է ամեն փիլիսոփայութեան:

Խիստ բնական է հոգեբանական և պատմական զարգացման տեսակէտից, որ մարդկային մտածողութեան սկզբնական շրջանում իմացաբանութիւնն ունենար նայիւ ուղիւստիկ բնոյթ: Նախնական միտքը արամադիր է ընդունել, որ անմիջականօրէն տուեալ իրականութիւնն է բուն օբեկտիւ իրականութիւնը. գոյնը, ձայնը, կարծրութիւնը, ցրտութիւնը ևլն. հէնց այնպէս էլ ըստ ինքեան գոյութիւն ունին, անկախ սուբեկտի կազմից և գոյութիւնից. մարդկային օրգանները և միտքը հայելի են, որ անադարա արտացոլում են իրերն ու նրանց յատկութիւններն այնպէս, ինչպէս նրանք գոյութիւն ունին ինքն ըստ ինքեան:

Սակայն այդ միամիտ աշխարհայեացքը չէր կարող բաւարարութիւն տալ մարդկային խուզարկու, միշտ կասկածող և քննադատող մտքին: Հարցեր են ծագում, և միտքը թմրած միապաղաղութիւնից բնականաբար դիֆֆերենցիացիայի է ենթարկում և դրան գուզընթաց սկսում է խախտուել հաւատք դէպի անմիջականօրէն տուեալ իրականութեան օբեկտիւութիւնը: Մտածողութիւնը դեռ շատ վաղ սկսեց նկատել, որ անմիջականօրէն տուեալ իրականութիւնը փոփոխականն է և անցողիկը, և որ այդ անցողիկի խոր և զգայարանների անմիջական ըմբռնութիւնից խուսափող հիմքը անանցն է և յարական.— սկսեց դիտակցել փոփոխականի և անփոփոխի, անցողիկի և յարակայի հակադրութիւնը: Հակադրութեան այդ դի-

տակցութիւնը կրիտիքական առաջին ըագմաբեզոն սաղմն էր, միաժամանակ և թոյնը նայելու ռէալիզմի, որ զարգանալով հէնց նրա սրտում՝ վերջի վերջոյ պիտի ոչնչացնէր նրան և նրա աւերակները վրայ կառուցանէր մտքի մեծ ճարտարապետի միջոցով կրիտիցիզմի հոյակապ շէնքը: Խորհրդածելով այդ հակադրութեան վրայ մարդկային միտքը գտաւ, որ անցողիկն ու փոփոխականը (այդ է անմիջականօրէն տրուած իրականութեան նկարագիրը) «թուացող» են և խաբուսիկ, ուրեմն և օրեկտիւ արժէքից զուրկ. օրեկտիւ արժէք ունի միայն անփոփոխն ու յարական: Այս գիտակցութեան միամիտ փաստական արտայայտութիւնն է, որ Թադէսը ջուրն է համարում մնայուն հիմքը անցողիկ թուացող «երևոյթ»ների, Անաքսիմէնը հողմը և ին: Դեռ 5 դար ն. Ք. յոյն փիլիսոփայութիւնն սկսեց գիտակցել, որ օրեկտիւ նշանակութիւն ունեցող օրգանն է մտածողութիւնը, որի միջոցով կարելի է թափանցել իրականութեան յարակայ և անփոփոխ հիմքը, և որ զգայարանները տալիս են միայն «երևոյթը», փոփոխականը (Դեմոկրիտ, Պարմենիդ): Սկսում է մարդը իւր իմացութեան օրգանները գնահատել. իսկ օրգանների գնահատութիւնն ոչ այլ ինչ է, բայց եթէ գիտակցելը սուրբեկտի՝ մասնակցութեան իր իմացութիւն կազմելիս, այսինքն քննադատական առաջին քայլը՝ թէպէտ և սուրբեկտի մասնակցութիւնը նկատուում է որպէս աւելի բացասական քան դրական նշանակութիւն ունեցող մի հանգամանք. իսկ կրիտիցիզմը դոգմատիզմից տարբերուում է հէնց նրանով, ինչպէս խորամտութեամբ նկատում է Կունօֆիշերը, որ մի դէպքում գիտակցում է սուրբեկտի մասնակցութիւնը և ամբողջ ստեղծագործական դերը, միւս դէպքում ոչ:

Մտքի գիֆֆերենցիացիայի հէնց այս առաջին քայլի մէջ կարելի է կանխանշմարել յետագայ փիլիսոփայական ուղղութիւնները, խիստ սաղմնային և պերսպեկտիւային դրութեամբ: Օրգանների այդ հակադրութեան գիտակցութիւնից իրապէս և տրամաբանօրէն ծագում են մի կողմից էմպիրիզմի և ռացիոնալիզմի, միւս կողմից օրեկտիւլիզմի և սուրբեկտիւլիզմի, մի այլ կողմից նոմինալիզմի և ունիվերսալիզմի, մի 4-րդ կողմից դոգմատիզմի և սկեպտիցիզմի հակադրութիւնները: Որպէս զի հասկանալի կացուցուի այդ ուղղութեանց տրամաբանական-իրական կապը, պէտք է խորը թափանցել այդ ուղղութիւններէ բուն ոգին և գտնել այն կենդրոնական ոգին, բուն սուրբատանցը, որի զանազան մոգուսներն են այդ տարբեր անուններ կրող ուղղութիւնները:

Հիմնական ուղղութիւնները ռացիոնալիզմն ու էմպիրիզմն են: Սկեպտիցիզմը յատուկ է էմպիրիզմին: Համոզուելու համար բաւական է մտքովն անցկացնել էմպիրիզմի պատմական զարգացման ընթացքը սկզբից մինչև Դաւիթ Հիւմ և հետևել էմպիրիզմին իմմանենտ սկեպտիցիզմ կոչուած թոյնի ներդործութեանը նրա (էմպիրիզմի) օրգանիզմի վրայ և նրա ինքնօժանջացումը Հիւմի մէջ: Իսկ ռէալ-պատմական զարգացումը (մանաւանդ մտքի կեանքում) տրամաբանական զարգացման արտայայտութիւնն է: Եւ իբրք, եթէ ամէն ինչ վերածուած է փորձի, որը միշտ եզական է և մասնակի և ըստ ինքեան չի պարունակում իւր մէջ անհրաժեշտութիւն և հանրապարտադրութիւն, հետևաբար և գոյութիւն չունի գիտութիւն իսկական իմաստով (անհրաժեշտ և հանրարժէք իմացութիւն աշխարհի մասին): Իսկ ռացիոնալիստը, ինչ չափով որ նա հաւատում է, թէ բանականութեան միջոցով հասանելի է և իմանալի ինքնին իրականութիւնը, դողմատիկ է:

Ինչ վերաբերում է նոմինալիզմին և ունիվերսալիզմին, պէտք է ասել, որ նոմինալիզմը էմպիրիզմի ոգուց բղխող և նրան իբրև իր կրողին պատկանելիք մի ուղղութիւն է: Եթէ իրականութեան հիմնական տուեալը եզական ըմբռնումներն են, սրտնք ցոյց են տալիս միմիայն մասնակի փաստեր, և եթէ այդ եզական տուեալներով սպառւում է ողջ իրականութիւնը, ապա ուրեմն չկայ ընդհանուր հիմք իրականութեան, որի անցողիկ վիճակներն ու արտայայտութիւններն, են իբր թէ, մասնակիները. ընդհանուրը սոսկ անուն է, որով մենք ուզում ենք արտայայտել մասնակի շատ դէպքեր. իրականը մասնակին է: Ճիշտ նոյնպէս էլ ունիվերսալիզմը ռացիոնալիզմին յատուկ է, ինչ չափով որ ռացիոնալիզմը իմացութեան կարևոր օրգանը համարում է բանականութիւնը, որը ունիվերսալ ընոյթ ունի, և դործադրում է մատեմատիկական դեդուկտիւ մեթոդը: Փորձն անընդունակ է ըստ ռացիոնալիզմի իմացութեան հիմք ծառայելու, նա ընդհանուր ընոյթ չունի, նա չի կարող թափանցել հասնել բոլոր իրերի և վիճակների հիմք կազմող սուբստանցիային, որը մատչելի է միայն բանականութեան և սրից բանականութիւնը որպէս աքսիոմայից հետևցնում է ակեզներբի ամբողջ կառուցուածքը, ամբողջ երևոյթները, որ բղխում են նրանց անիոփոխ հիմքը կազմող սուբստանցիայից, որպէս նրա անցողիկ վիճակներ, մոդուսներ¹):

1. Աւիվերսալիզմի և նոմինալիզմի ընդհանուր փիլիսոփայական հարադրութիւնը չափով շփոթել նոյնբանական նոմինալիզմի և ռէալիզմի

Վերջապէս հեշտ է նկատել, որ օրեկտիւլիզմը յատուկ է ռացիոնալիզմին, ինչ չափով որ սա իմացութեան օրգանը համարում է մտածութիւնը, որը գերանհատական օրեկտիւ նշանակութիւն ունի և որի միջոցաւ, ըստ ռացիոնալիզմի, կարելի է թափանցել և վերահասու լինել ինքնին իրականութեան: Իսկ սուրբեկտիւլիզմն էլ յատուկ է էմպիրիզմին, ինչ չափով որ փորձնական ըմբռնութիւնները անհատական են և զուրկ օրեկտիւ արժէքից:

Այսպիսով հիմնական ուղղութիւնները մնում են ռացիոնալիզմն ու էմպիրիզմը, միւսները նրանց բնաւորութեանը յատուկ պատկանելիքներ են. և բոլորում են զրանցից: Եթէ մենք աչքի անցկացնենք թեթեակի էմպիրիզմի և ռացիոնալիզմի ռէալ-պատմական զարգացումը, ինչպէս նա տարածում է ժամանակի գծի վրայ, այնուհետև տանք զրանց արամաբանական զնահատութիւնը, մենք զրանով պատասխանած կլինենք և զնահատած նաև միւս ուղղութիւնները, ինչ չափով նրանք կախուած են զրանցից: (շարունակելի) Յ. Յ.



ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՄ

VI

Մերոդական աշխատանք

Զևերի զուտ տեսական ուսուցումը վերացական ձևով ժողովրդական զպրօցի աշակերտի համար նոյն չափ ձանձրացուցիչ է, որչափ և անկարևոր (իւրաքանչիւր ձև, լինի այն տարածական թէ լեզուային, հետաքրքիր է այն չափով, որչափ նա ըովանդակութիւն, իմաստ է երևան հանում: արտայայտութիւն է մի մաքի կամ ներկայացումն մի իրի): Ոչ թէ մաթեմատիկական իմաստութիւն, մեռած ծանօթութիւն կամ զուտ տեսական իմացութիւն պէտք է սանին մատակարարել, այլ նրան պէտք է առաջնորդել գէպի կենդանի կարողութիւն, ձևերի լեզուի գործնական ըմբռնումը. աւանդման միջոցին միշտ պէտք է աչքի առաջ ունենալ իրականը, այն ամեն կա-

հակադրութեան հետ՝ վերջին (հոգեբանական) ուղղութեանց հակադրութիւնը մի մասնակի արտայայտութիւն է փիլիսոփայական ընդհանուր ուղղութեանց, որոնք աւելի խորն են եւ հիմնական.